# ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

## ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

*Խմբագրի դէպի Հար. Ամերիկա կատարած ճամբորդութեան հետեւանքով էր գլխաւորապէս, որ «Վէմ»-ի վերջին համարները սովորականից ուշ լոյս տեսան: Այս յապաղումի համար որոշ չափով պատասխանատու են նաեւ բաժանորդներից ու գործակալներից շատերը, որոնք ժամանակին իրենց հաշիւը չեն փակել:*

*Խմբագրութիւնս միջոցներ է ձեռք առնում, որպէսզի այսուհետեւ «Վէմ»-ի համարները ժամանակին լոյս տեսնեն: Այդ բանում, սակայն, մեզ պէտք է օգնեն եւ բաժանորդներն ու գործակալները, որոնց դիմում ենք յատուկ խնդրանքով՝ օր առաջ փակել իրենց հաշիւները:*

*Պէտք չունինք ծածկելու, և արդէն քանիցս ասել ենք, որ «Վէմ»ը զուտ գաղափարական ձեռնարկ է, որ եւ է շահադիտական նպատակներ չի հետապնդում եւ ապրում է լոկ բաժանորդների տուած դրամով: Հետեւաբար, նրա հրատարակութեան կանոնաւորութիւնն էլ կախուած է բացառապէս բաժանորդների ճշդապահութիւնից – համարները ժամանակին ստանալու համար պէտք է ժամանակին վճարել բաժնեգինը:*

*Յոյս ունենք, որ մեր յարգելի բաժանորդներն ու գործակալները անհետեւանք չեն թողնի մեր այս դիմումը:*

*Ֆրանկի անկման հետեւանքով, ստիպուած ենք Ամերիկայի եւ Բրիտանական Կայսրութեան մէջ մտնող երկրների բաժնեգինը հաշւել չորս դոլար, որ աւելի պակաս է, քան 70 Ֆր. մինչեւ Ֆրանկի արժէքազրկումը:*

---

# ՎԷՄ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

*Տիկ. Ո. Շաւարշունի, փութաքէթ* – Մ. Յովաննեանին, Բրանքս. Ն. Ե.

*Տիկ. Ս. Սինանեան, փութաքէթ* – Ա. Տիրատուրեանին, Փութաքէթ.

*Տիկ. Մ. Ցարութիւնեան, փութաքէթ* – Իր եղբօրը՝ Տ. Ռստիկեանին, Գերմանիա.